ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

20/05/2021

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:
Բացակա էին՝ Արտաշ Այվազյանը, Նարինե Գրիգորյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Վալոդյա Սմբատյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Աշոտ Հարությունյան, Լուսինե Մարտիրոսյան
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը
Լսեցին
20.05.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 2021 թվականի մայիսի 20-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը.
1) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2) ՕՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՊԱՐՏՔԻ ԵՎ ՀՐԱՉՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՊԱՐՏՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
3) ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ՏՈՒՆ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 200.2 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4)ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,66751 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.15527 ՀԱ ԵՎ 0.2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6)ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,0016 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7)ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,06546 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8) ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ ,,ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ,, ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9)ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

10)ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱՍԻՆ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքի բյուջեի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 1367,8 հազ. ՀՀ դրամ պակասեցնել ավելացնելով՝

- 80.0 հազ. ՀՀ դրամ օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում բաժին 1 խումբ 1 դաս 1 ոլորտի գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածին /հոդված 4261/ ձեռք բերված ծաղիկների և ծաղկեպսակների արժեքի վճարման համար.
- 987.8 հազ. ՀՀ դրամ, որպես համաֆինանսավորում, բաժին 9 խումբ 1 դաս 1 նախադպրոցական կրթություն ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ << Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի տանիքի ընթացիկ նորոգման ֆինանսավորման համար:
- 300.0 հազ. ՀՀ դրամ բաժին 5 խումբ 1 դաս 1 աղբահանության ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ համայնքապետարանի ԿՕ-440-2 /ԳԱԶ 3309/ մակնիշի ավտոմեքենայի տուրբինային մղիչի ձեռքբերման ֆինանսավորոման համար:

2. Տալ համաձայնություն համայնքի բյուջեի ֆոնդային մասի բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող / ոլորտի շենքերի և շինությունների կառուցում հոդվածից /հոդված 5112/ 1523,0 հազ ՀՀ դրամ պակասեցնել ՝ ավելացնելով օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում բաժին 1 խումբ 1 դաս 1 ոլորտի վարչական սարքավորումներ հոդվածին /հոդված 5122/ համայնքի տեղեկատվական համակարգի խափանված Սերվերի, արտաքին մշտական հիշողության սարքի և անխափան սնուցման սարքի ձեռք բերման համար:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ն/

Լսեցին

ՕՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՊԱՐՏՔԻ ԵՎ ՀՐԱՉՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՊԱՐՏՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, ուսումնասիրելով Օնիկ Մարկոսյանի և Հրաչյա Խաչատրյանի դիմումները պարտքի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ.

1. Մերժել Օնիկ Մարկոսյանի գույքահարկի պարտքի և Հրաչյա Խաչատրյանի հողի հարկի պարտքի գծով արտոնություններ ստանալու դիմումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47/

Լսեցին

ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ՏՈՒՆ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 200.2 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Տելեսիկ Սուրենի Գասպարյանի դիմումը.

1. Տալ համաձայնություն համայնք Եղեգնաձոր ք., Պռոշյան փողոց, 2-րդ նրբանցք, տուն 27 հասցեում գտնվող, Տելեսիկ Սուրենի Գասպարյանին 1990թ.-ի մայիսի 6-ի Եղեգնաձորի ավանային խորհրդի գործկոմի որոշմամբ բնակելի տուն կառուցելու նպատակով հատկացված 800 քմ հողատարածքից ավել զբաղեցված, չկառուցապատված 200,2 քմ մակերեսով հողատարածքը կադաստրային արժեքով (1քմ՝ 1877,7 ՀՀ դրամ), ուղղակի վաճառքով օտարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.66751 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ.-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի դրույթները.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող համայնք Եղեգնաձոր ք., հասցեում գտնվող, 10-001-0307-0033 կադաստրային ծածկագրով, 0.66751 հա մակերեսով նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող հողատարածքը 10 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրելու համայնքապետի առաջարկությանը:
2. Վարձակալական մեկնարկային վճար սահմանել տարեկան 35000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.15527 ՀԱ ԵՎ 0.2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող համապատասխանաբար 10-001-0321-0005 և 10-001-0342-0034 կադաստրային ծածկագրերով, 0.15527 հա և 0.2 հա մակերեսներով, համայնք Եղեգնաձոր ք. հասցեում գտնվող, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք և նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող հողատարածքները մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը:
2. Մեկնարկային գին սահմանել 835000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,0016 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Եղեգնաձոր ք., Պ. Սևակի փողոց 9/20 հասցեում գտնվող 10-001-0049-0122 կադաստրային ծածկագրով, 0,0016 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը:
2. Մեկնարկային գին սահմանել 100000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,06546 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Եղեգնաձոր ք., Սյունիքի փողոց 4/1 հասցեում գտնվող 10-001-0135-0093 կադաստրային ծածկագրով, 0,06546 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնսկավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը:
2. Մեկնարկային գին սահմանել 1890200 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52/

Լսեցին

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ «ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համայնքում ֆուտբոլային ավանդույթների զարգացման և սպորտային կյանքի ակտիվացման նպատակով, հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը, հիմք ընդունելով «Նորավանք սպորտային ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 14 մայիսի 2021թ.-ի թիվ 384ա)

1. Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող Սպանդարյան փողոց 40/3 հասցեում գտնվող մարզադաշտը (հիմք՝ 2020 թվականի հոկտեմբերի 22-ին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայական N 22102020-10-0012) 5 (հինգ) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Նորավանք սպորտային ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. «Նորավանք սպորտային ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է 24 (քսանչորս) ամսվա ընթացքում իրականացնել անհատույց օգտագործման տրամադրվող անշարժ գույքի հիմնական և ընթացիկ վերանորոգումը՝ ՈՒԵՖԱ-ի միջազգային չափանիշներին համապատասխան:
3. «Նորավանք սպորտային ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է հինգ տարվա ընթացքում Եղեգնաձոր քաղաքի տնտեսության, համայնքի զարգացման, սոցիալական զարգացման համար գործընկեր ընկերությունների հետ միասին համատեղ ծրագրում ավելի քան 400000 ԱՄՆ դոլար գումար ներդնել, ստեղծել աշխատատեղեր, ապահովել ֆուտբոլային թիմերի վերապատրաստումը և ֆուտբոլային խաղերի անցկացումը՝ խթանել տեղական տնտեսության և հասարակական կյանքի զարգացումը, իսկ նշված ժամկետի ավարտից հետո փաստացի Փոխառուի կողմից Գույքի օգտագործման շարունակման դեպքում՝ պայմանագրի գործողությունը կհամարվի երկարաձգված 20 (քսան) տարով առանց այլ գրավոր փաստաթուղթ կազմելու՝ Պայմանագրի ժամկետը կհամարվի երկարաձգված:
4. Եղեգնաձորի համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով «Նորավանք սպորտային ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքելու անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու պայմանագիր, որի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կրում է «Նորավանք սպորտային ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53/

Լսեցին

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 30 նոյեմբերի 2006թ.-ի N 1730-Ն որոշումը.

1.Եղեգնաձոր համայնքի Անդրանիկի փողոց թիվ 33/2 հասցեում գտնվող, 0.04000 հա մակերեսով հողատարածքը համապատասխանեցնել Վայոց ձորի մարզի,Եղեգնաձորի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և դարձնել նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողատարածք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54/

Լսեցին

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի Խնձորի այգի թաղամասում, ճանապարհին կից ԼՏԵ 160/10 կվտ տրանսֆորմատորային ենթակայան տեղադրելու նպատակով անհատույց հատկացնել 16 քմ հողատարածք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱԼՈՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ